ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 09

Քաղաք Արթիկ Քսանվեցը հունվարի երկու հազար տասնմեկ թվական

Քաղ. *Կամո Հենրիկի Քալաջյանը*, բնակվող՝ ՀՀ, քաղաք Արթիկ, Աղաբարյան 11 հասցեում, անձն. AC0492567, տրվ. 08.01.1999թ., 028-ից, մի կողմից այսուհետ «Վարձատու», և մյուս կողմից ՀՀ *Շիրակի մարզպետարանի աշխատակազմ*, այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս ՀՀ *Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Խ. Պողոսյան*, որը գործում է ըստ *մարզպետարանի կանոնադր.*, կնքեցին սույն վարձակալության պայմանագիրը, հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Համաձայն սույն պայմանագրի Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալին տրամադրել ՀՀ, *Արթիկ քաղաքի 9. Նժդեհի 3/3 հասցեում գտնվող տարածքը՝ 100քմ ընդ. մակերեսով* ՀՀ Շիրակի *մարզպետարանի Արթիկի ՍՕՏԳ-ի ստորաբաժանման համար* ժամանակավոր օգտագործման և տիրապետման համար:

2.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Վարձատուն պարտավորվում է՝

ա/ Տարածքը տրամադրել Վարձակալին ոչ ուշ քան 10 հունվարի 2011թ.: Նշված պարտավորությունը կհամարվի կատարված այն պահից հետո, երբ կողմերը կստորագրեն Վարձակալի տիրապետությանը տարածքը հանձնելու վերաբերյալ ակտը:

բ/ Վարձակալին փոխանցել վարձատուին սեփականություն հանդիսացող տարածքը, որի չափը կազմում է 100մ^2:

գ/ Իր հաշվին իրականացնել տարածքի հիմնական վերանորոգումը:

2.2 Վարձակալը պարտավորվում է՝

ա/ ժամանակին վճարել վարձակալական վճարը

բ/ Օգտագործել տարածքը ըստ նպատակի

գ/ Տարածքը պահել պատշաճ վիճակում

դ/ Իր հաշվին իրականացնել տարածքի ընթացիկ վերանորոգումը և կրել տարածքի պահպանման ծախսերը

ե/ Սույն պայմանագրի լուծման ժամանակ տարածքը Վարձատուին վերադարձնելու նույնպիսի վիճակում, որում այն ստացվել է հաշվի առնելով նորմալ մաշվածությունը:

3.ՎՃԱՐՈՒՄԸ

3.1 Վարձակալական վճարի չափը կազմում է տարեկան *600.000/վեց հարյուր հազար/* ՀՀ դրամ

3.2 Վարձակալական վճարը վճարվում է հետևյալ ժամկետներում և հետևյալ կարգով *Յուրաքանչյուր եռամսյակ 150.000 դրամ՝ փոխանցման կարգով, որից 15.000դրամ /10%/, որպես եկամտահարկ՝ ՀՀ Պետ. բյուջեի համապատասխան հաշվին:*

3.3 Սույն պայմանագրի 3.1 կետում հաստատված վարձակալական վճարը իր մեջ ընդգրկում է տարածքը օգտագործելու համար վճարը:

4.ՇԵՆՔԻ ԲԱԺԱՆԵԼԻ և ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

4.1 Այն դեպքում երբ Վարձակալն իր հաշվին Վարձատուի համաձայնությամբ կատարել է տարածքից անբաժանելի բարելավումներ առանց դրան վնաս պատճառելու, Վարձակալը իրավունք ունի սույն պայմանագիրը դադարելուց հետո ստանալ հատուցում այդ բարելավումների արժեքի չափով:

4.2 Սույն պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կողմերը կրում են պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է մինչև 31 դեկտեմբերի 2011թ:

5.2 Պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսեր կատարվում են Վարձատուի հաշվին: Պայմանագրից ծագող անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման համար վարձատուն պետք է դիմի պայմանագրի նոտարական վավերացումից հետո 2 օրվա ընթացքում:

5.3 Պայմանագիրը կազմված է չորս օրինակից, որոնք ունեն միևնույն իրավաբանական ուժը:

ՎԱՐՁԱՏՈՒ

Կամո Հենրիկի Քալաջյան
բնակվող՝ ք. Արթիկ
Աղաբարյան փող., տուն 11
անձն. AC0492567, 08.01.99թ., 028

Հ/Հ ԱՇԻԲ ՓԲԸ 247040028802

ՎԱՐՁԱԿԱԼ

ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմ
հասցե. ք. Գյումրի, 9. Նժդեհի 16
Հ/Հ 900211205027
Գյումրու ՏԳՔ
ՀԱՀՀ 05507437
ՀՀ, Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան

«26» 01. 2017 թվականին սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ «Արթիկ» նոտարական տարածքի նոտար՝ Սիդա Թորգոմի Մկրտչյանի կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, ինչպես նաև իրավաբանական անձի և նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածին համապատասխան, սույն պայմանագիրը ենթակա է գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի տարածքային ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում 144-ով:

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ „Պետական տուրքի մասին„ և „Նոտարիատի մասին„ օրենքների

Նոտար՝

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՔԱՂԱՔ ԱՐԹԻԿ *Տասներեքը հունվարի երկու հազար տասնվեց թվական*

Մենք՝ Կամո Հենրիկի Քալաջյանը, անձնագիր AN 0698705, տրված 04 նոյեմբերի 2013թ., 028-ի կողմից, բնակվող՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Արթիկ, Աղաքարյան փող., տուն 10/2(տաս կոտորակ երկու) հասցեում, և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմ, ի դեմս Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Խ. Պողոսյանի, որը գործում է ըստ մարզպետարանի կանոնադրության,

համաձայն ենք 26 հունվարի 2011թ. Արթիկ նոտարական տարածքում կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի մեջ(գրանցված սեղանամատ. 144-ով) մտցնել հետևյալ փոփոխությունը.

1. 26 հունվարի 2011թ. կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի թիվ 3.1 կետում վարձակալական վճարի չափը փոփոխել և սահմանել տարեկան 1.200.000/մեկ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ,
2. 26 հունվարի 2011թ. կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի թիվ 3.2 կետում փոփոխել և յուրաքանչյուր եռամսյակ փոխանցել 300.000/երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ, որից 30.000/երեսուն հազար/դրամը(10%), որպես եկամտահարկ ՀՀ Պետ. բյուջեյի համապատասխան հաշվին,
3. 26 հունվարի 2011թ. կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի թիվ 5.1 կետում պայմանագրի վերջնաժամկետը փոփոխել և սահմանել երկու հազար քսանմեկ թվականի դեկտեմբերի երեսունմեկը:
4. Սույն համաձայնագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

Կամո Հենրիկի Քալաջյան

ՀՀ Շիրակի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝
Խ. Պողոսյան

Տասներեքը հունվարի երկու հազար տասնվեց թվական

Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ,,Արթիկ,, նոտարական տարածքի նոտար ԳԱԳԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԲԶՆՈՒՆՈՒՍ կողմից:
Համաձայնագիրը ստորագրված է քաղ. Կամո Հենրիկի Քալաջյանի և Խ. Պողոսյանի կողմից իմ ներկայությամբ: Նրանց ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության ,,Պետական տուրքի մասին,, և ,, Նոտարիատի մասին,, օրենքների

ՆՈՏԱՐ՝